պիսկոպոսն, որ միշտ իւր բարերար իշխանութեամբ կը սանձահարէր յուսի վարքը:

Անտիոքայ վերաբերեալ վէճն չէր միայն խաչակրաց պահողն ի քաղաքի. Եգիպտոսի Ֆէթիմեայ խալիֆայն, որ կը համարէր այս նիզակակիցները, որպէս թիկունք ընդդէմ տաճկաց, յորոց գրաւել զԵրուսաղէմ, այլ եւ ընդդէմ ներքին թշնամեաց կամեցաւ ընդ նոսա դաշինս կռել՝ տալով զԵրուսաղէմ նոցա. բայց խաչակիրք պահանջելով, որ նա հրաժարական տայ բոլոր Պաղեստինից հաշտութիւնն գլուխ չեկաւ. յամսեանն Մարտի 1099ի քրիստոնեայ զօրքը թողեց զԱնտիոք ժամադիր լինելով ի Լաոդիկէ, որ էր միմիայն քաղաք ի Սիրիա պատկանող Կ. Պօլսոյ կայսերաց. անտի զօրքը չուեց դէպի հարաւ ընդ լերինս Լիբանանու, ուր երբեմնակի սփոփանք էր գտանում ի Ձենովացւոց ու նուաճելով Տրապօլսոյ, Տիւրոսի, Սիդոնի եւ Կեսարիոյ տաճիկ իշխանքն հասաւ յԱքիոյ, որոյ կառավարիչն խոստացաւ յանձնել իւրեանց քաղաքը եթէ յաջողէին առնուլ զԵրուսաղէմ. ապա զբաւելով զՅոպպէ նաւահանգիստ՝ հասաւ Յունիսի 6 ին մի լերան վերայ, որոյ ստորոտը կը գտնուէր Երուսաղէմ:

Ո՜րպիսի ուրախութիւն, ո՛րպիսի ցնծութիւն, որպիսի աղաղակք՝ երբ լսուեցաւ ձայն՝ ահա՛ Երուսաղէմ: Նոյն տեղ կը նկրտին՝ ի հանդարտութիւն բերել նեղացած զօրքը. սրացաւ առժամայն պաշարեց վերայ. բայց զքաղաքն առնուլ դիւրին չէր: Իֆթիխար Էմիրն յանուն խալիֆայն Եգիպտոսի կը պաշտպանէր քաղաքն 40,—60,000 զօրօք մինչդեռ Քրիստոնէից զուգագը բաղկացած էր 20,000 հետեւակազօրից եւ 1500 հեծելազօրից, չունէր կարեւոր պիտոյք, ոչ ուտեստ, ոչ ջուր, ոչ փայտ պատերազմական մեքենայս կազմելու: Սակայն կրօնական եռանդն ոյժ պարգեւեց անզօր զօրքին եւ մարտական գոչիւնն «Աստուած կամի» ներշնչեց ի նոսա մի եւ նոյն երկնային ազդեցութիւնն, որ երեք տարի առաջ ազդել էր ի Կլէրմոն: Մի ձենուական նաւ այդ տարաբախտ միջոցին բերաւ զէնք եւ պաշար, սակայն չը կարողացաւ ծարաւահոյծ զօրաց տանջանաց վախճան տալ, ձիանք եւ գրաստք կորան: Առընթեր Սիւքէմի գտին մի անտառակ, ուր կային կարեւոր փայտք ի կազմումն երկու շարժուն բրգաց, ուստի Յուլիսի 9 ին կատարելով մի թափօր Սուրբ քաղաքի չորեք կողմը, որպէս ի հնումն Յեսու յԵրիքով, ի 14 ին փորձեցին թշնամւոյ վերայ մի յարձակում, բայց յետ մղուեցան. երկրորդ օրը կրկնեցին ու Գոտըֆրիտ Բոլօն երրորդ*) անձն եղեւ, որ ցատկեց քաղաքի մէջ ու դրունքը բացաւ զօրաց: Խաչակիրք մտին ի փողոցս եւ ի տունս անօթի արիւնոց կատաղութեամբ: Աստուծոյ դէմ գործեալ նախատանաց վրէժխնդրութեան արիւնը դարձրեց նոցա վազր. Տաճիկ, Հրեայ, կին, մանուկ ոչ ինչ չը խնայեցին, քանզի յայտնել էին թէ ով որ առաջ մտանէր ի մի տուն, իւր ժառանգութիւնն էր: Կարքեդոն քաղաքի առմանէն զկնի դեռ սոյնպիսի կոտորած չէր տեսնուած. ի մզկիթն Օմարի յաղթողք ընկղմուած էին յարեան մինչ իւրեանց ոտից կոճղն: Բնակչաց մի սակաւ մասն զերծաւ ի մահուանէ:

(Շարունակելի)

Թ. Հ. ՌՈՍՏՓԵՆԵԱՆՑ.

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ.

Երկրագործութիւնն թէ իբրեւ գիտութիւն եւ թէ իբրեւ արուեստ ուսուցանէ զերկիրն պտղաբեր առնելոյ հնարքը, ուսուցանէ կերպաւորել տնկական բնութիւնն օգտաւէտութեան նպատակաւ, ամենատնտեսական եւ ամենակատարեալ կերպիւ ստանալ տնկոց արդիւնքն, եւ հետեւաբար ուսուցանէ պարտիզաց, անտառաց եւ յատկապէս դաշտաց մշակութիւնը. երկրագործութիւնն է փոքր՝ միջին եւ մեծ մշակութիւն, եւ այս արհեստի զօրութիւնն այն կէտի մէջ է հաստատուն՝ երբ ճարտարութեամբ կրթուած ամենայն ճիւղք հաւասարապէս պտղաբեր լինին:

(*) Երկու եղբարք Լուդոլֆ եւ Էնժիլպէր եղեն առաջինքն:

Այս այսպէս խորհրդածեալ, երկրագործութիւնն ունի վերաբերութիւն տընկագործութեան, և երկրագործին պէտք է ունել տեղեկութիւն տնկախօսական գիտութեան, որոյ գործածութեան մէջ սերտիւ պէտք է միանայ նաև անասնակըրթութեան հետ, քանզի այս արուեստք են ազգոյ սկզբունք պտղաբերութեան, և հետևաբար մշակագործութիւնն՝ կենդանաբանական գիտութեանց ուսանելոյ բարեպատեհութիւնն պարգևէ, զի կարի հակաւոր է երկրագործին վնասակար կենդանեաց ծանօթութիւնն:

Այլ գիտութիւնք՝ որոց մէջ նաև երկրաչափութիւնն, մեքենագիտութիւնն, բնագիտութիւնն, օդերևութախօսութիւնքն, բնալուծութիւնն, երկրախօսութիւնն, անասնաբուժութիւնն, քաղաքական տնտեսութիւնն, վիճակագրութիւնն, քաղաքական իրաւունքն, և ճարտարապետութիւնն կարող են մեծապէս օգնել երկրագործութեանն, որով լուսաւորեն նորա ընթացքն և ապահովեն նորա քայլն:

1 Բնական զօրութիւն երկրի.

Բնական զօրութիւն երկրի: Երկիրն է տեղի, ուր տունկք գտանեն միանգամայն իւրեանց բնական պաշտպանութիւնն, նոցա սննդեան նիւթքն, հաստատ մարմին կամ գործողն ընթացակից են կատարելութեան այս պաշտօնի:

Այսպէս նուազ կամ առաւել կարողութիւն տնկոյն գրեթէ ամբողջապէս կախումն ունի երկրի բնական զօրութենէ: Այս զօրութեանց առաջին կարգին վերաբերին և այն զօրութիւնքն, որք ունին երկրագործական գործեաց ազդեցութեան և արմատոյ ձգմանն հակառակելոյ և յաջողելոյ զօրութիւնքն, որք են յարակցութիւն, միաւորութիւն, ծանանողութիւն և պնդութիւն: Այս տեղեկութեան ներքոյ եղած ծայրքն են զօրաւոր երկիրն և շարժուն աւազք, յարմարաւոր տեղեքն են կակուղ մասունք երկրի:

Երկրորդ կարգին վերաբերին տնկոց փոխադրութեան և սննդարար գոյութեանց կազմութեան զօրութիւնքն: Այս թուոյ մէջ երևելի ընծայեցուցանեն նախ ծծելոյ, առաջնորդելոյ և շատ կամ սակաւ վերատանալոյ կարողութիւնն, և ջերմագոյն (ջիր) սաստիկ կամ նուազ ճառագայթելոյ և ցոլացուցանելոյ հանգամանաց մէջ:

Եւ արդեամբ բարեխառնութիւնն տարածանի իւր սահմանաւոր և չափաւոր բարձրութեամբն, տնկական ամենայն մասունքն ընդարձակել, հողոյ մէջ պարունակուած գործարանական նիւթոց եռացումն յաջողել, և արձակել նոցա միութենէն զայնս՝ որք տնկոյ մէջ վերասկանել պարտաւորին, և դնել զնոսա արմատոյ զօրութեանց մէջ, որով նոյն ժամանակն զօրութիւնն առաւելացուցանէ ըղծծումն. վերջապէս պտղոյ կամ հատիկների մէջ սահմանել բնալուծական կերպաւորութիւնն, որ անշուշտ պիտի բողբոջի: Բայց եթէ զօրութիւնն բարձրանայ կամ չափէն դուրս խստանայ, ինքն չորանայ և խստացուցանէ զհողն, բարեխառնութեանն իջանելն իւր բարձրանալոյն հակառակ ազդեցութեանցն հետևի. ջերմութեան սահմանն՝ որ զանազան երկիր կարէ հասանել և տալ նոցա դնել վերադիր ցրտութեան կամ ջերմութեան,

առաւելապէս յետագայ հանգամանքէն կախումն ունի. 1, նոցա կազմութենէն. 2, նոցա խտութենէն, որ ըստ չափու՝ առաւելու կամ նուազի, և սահմանէ ընդհանրապէս մի առաւելութիւն կամ մի նուազութիւն նոցա ընդունակութեանց մէջ ջերմագոյի համար: Ահա այս պատճառաւ աւազն ջերմանայ առաւել քան աղբահողն կամ բուսաբեր հողն. 3, նոցա մակերևոյթի խստութենէն և անհարթութենէ. 4, նոցա մակերևութի գունէն, որ որչափ սևի հարկանի՝ նոյնչափ ևս ծծելոյ խտութիւն ստանայ 5, երկրի մէջ գտնուած ջրէն, որ ինչ երկրի սրտի մէջ հաստատ բնակութիւն ունի՝ զայն ցրտացուցանէ, որպէս հանդիպի կաւոց. շատ զանազանութիւն կայ կաւոց և աւազոց մէջ. քանզի վերջինս արագապէս ազատի ցրտութենէն. 6, անկիւնէն, զոր ձևակերպէ արեգական ճառագայթն անկանելով երկրի մակերևութի վերայ. 7, 8 դիրքութենէն և ապաստանէն, որք ձևակերպին ջերմագոյի ճառագայթումն, և հողմոց զօրութենէն և շոգիանալոյն:

Մշակութեան համար չը կայ և ոչ մի այլ գործածական հետևութիւն. երկրի ելեքտրական զօրութեանց առարկայի համար խուզարկութիւնքն ոչ ունեցան, բայց միայն նոյն երկրին համեմատութեամբ նիւթոց փոփոխակի ազդմանց վերայ ժողովեալ գիտողութիւնս և ձգական հոսանուտ մարմինս, որք որոշուած են ձևակերպել հիւսուածս, նոյնպէս և տունկս: Որք են սոքա, թթուածին, բորակածին օդ, ջրածին և ածխական թթուածնի կազն:

Ջուրն կարէ բառնալ նիւթս և կազս դիւրալուծական՝ որ կարի հարկաւորք են տնկոց սննդեանն և կարեն լինել մասն կազմութեան տնկոց, և նոցա գործարանս և շրջապատող մարմինս կակղացուցանել. Ջուրն ունի զօրութիւն թողուլ հողոյ մէջ նորա բնութիւն կերպաւորող սոյգ հիւթս, վերջապէս ջերմագոյի ազդեցութիւնն ունի նմանութիւն այն չափոյն՝ զոր երկիրն ծծէ ուղղանելոյ ժամանակն՝ այն զօրութեան հետ, զոր երկիրն արտաքս շնչէ այլ ժամանակի մէջ, զոր երկրի խոնաւագիտութիւնն և ձար խոտալից տեղւոյ ներգոյութիւն տայ:

Զանգուածոյ նուազութիւն կամ յետս դարձումն, զոր երկիրն իւր ցամաքութեամբն ցուցանէ, է խորհրդածութեան արժանաւոր մի պարագայ, այնու գիտմամբ՝ թէ նա որպիսի վնաս պատճառէ վարսաւոր արմատոց: Ոռոգելոյ կամ ծծելոյ զօրութեան ներքոյ երկիրն դասաւորուած է յետագայ կարգաւ. աւազ կոպճուտ, աւազ կրային (զոր կարելի է շրջել ի կիր), ամուլ կաւ, կաւ պարարտ, հերկելի կաւուտ երկիր, կաւ անաւազ, հող, կրային, կամ կիր նուրբ ածխաթըթուացեալ, պարտիզի բուսաբեր և մագնիսական հող ածխաթթու աղիւ. եթէ այս օրէնքն ուսանին թիւր իմաստով՝ նոքա ուսեալ են զօրացուցանելոյ օրէնքն, և եթէ կարողանան ուսանել նոցա խոնաւագիտութեան և զանգուածոց զօրութեամբ նուազելոյ օրէնքն, նոքա սովոր են կամ արկանել կրային աւազոյ և պարարտ կաւոյ մէջ հերկելի հող և դնել բուսաբեր հողն ի գլուխ սանդխոյն. ի խոնարհ կոյս այս բազմատեսակ հողոց կարգաւորեն կրկին բաժանումն, հիմնուած զանազանութեանց վերայ, զոր ներկայացուցանէ

մածանողութիւն երկրի և ազդեցութիւն պարարտութեան երկրի և պարարտարօտ մարգաց, մանաւանդ զօրութիւն գաճին առ համեմատութեամբ բանջարեղինաց, որ ինքնին ընկած է երկրախօսական դրութեան ներքոյ։

Այս դասաւորութիւնն ոչ միայն ունի գիտնական բնաւորութիւն, այլ և երկրագործական և սովորական. այս զգացմամբ այդ դասաւորութիւնն անկանի մշակութեան երեք էական առանձինն հանգամանաց ներքոյ, պատշաճութիւն հողոյն տնկոց, զօրութեան աստիճանն՝ որ կարևոր է աշխատանաց կատարմանն և կիրարկութեան պարարտացուցիչ նիւթոյ. զոր օրինակ՝ առաջին խնդրոյ համար, ելեքտրական և կրային թթուածինն պարունակող երկիրն բարձրագոյն օրինակաւ յարմար է ցորենոյ, և բանջարեղինաց պտղաբերութեանն, և առաւելու ուժգնութիւն ներկական տնկոց. առաւել աղածին երկիրն յարմարաւոր չէ ցորենոյ, որպէս կոպճուտ երկիրն, և ոչ 0 25 աղբահող պարունակող գործիաւոր հաստատութեան երկրին, այլ այդպիսի հողք յարմարաւոր են դալարեաց, զոր մշակեն ցողունի և տերևոց համար. կոպճուտ երկիրն յարմարաւոր է այն տնկոց՝ որոց աճումն է ձմրան ժամանակ, որպիսի են հաճարն և կարմիր բողկն և շաղգամն, անտառն սիրէ կաւակոպիճ տեղիս՝ ուր պտղաբեր ծառք աճեն ամենայն յաջողութեամբ, իսկ պարարտութեան և բազմարօտ լինելոյ համար աւազուտ և կրային երկիրն պահանջէ յաճախակի աղբարկութիւն, որ անշուշտ լուծանէ զանգուածս և պաղաւէտ առնէ. կաւային տեղիք պահանջեն աղբս, և այրել երկար միջոց, աւելի արդիւնաբեր լինելոյ համար. Ջրհեղեղեան տեղիք ընդունին պարարտութիւն գաճէն, իսկ կոպճախառն կաւք զպարարտութիւն կրախառն հողից, մինչ դեռ բնական գործադրելի երկիրն պահանջէ անասնոց աղբն հանդերձ բուսաբեր զանգուածս լուծանելովն (փշրելով)։

Ըստ որում ցորենոյ բոյսն մշակեալ բուսոց մէջ առաջին կարգն ունի, վասն որոյ երկրին մի այլ կարգաւորութեան հաստատութիւն է տալիս, քանզի պահանջէ փոխանակն գործադրութիւն երկրի՝ այս է մի ամ սերմանել և մի ամ անգործ թողուլ, որ ըստ յայտարարութեան Թաերի, է մի ամենափորձ բնալուծական գործողութիւն Գերմանիոյ։ Գլխաւորապէս արտն ցորենոյ անգործ մնալոյն զկնի առաւելապէս պտղաբերէ ցորեան քան թէ հաճար։ Մանաւանդ բնականաբար ակաւուտ և կրախառն երկիր, որ երկու կարգ բաժանին. պարարտ երկիր ցորենոյ և մաքուր և ընտիր երկիր ցորենոյն, որք ըստ իւրեանց կարողութեան կարեն վեց ամաց ընթացի մէջ, եռամեայ հանգստեամբ տալ մի ևեթ աղբարկութեամբ՝ մի կամ երկու անդամ զցորեան, և ապա զհաճար։

Յետագայ երկու որոշմունքն, երկիր գարւոյ և երկիր վարսակի, նոքա են, որք ձմերնային հունձէն զկնի՝ հաճութեամբ հաւանին ցորենոյ մշակութեան, (այս ինքն բուսուցանէ զցորեան,) այսպիսի երկիրներն մի քան զմի երևելի են իւրեանց արդիւնաբերութեամբն. սոցա առաջինն (գարւոյ երկիրն) ունի նոյն իսկ որոշումն ցորենոյ արտին, բայց սա վերստին բերէ վարսակ և ոչ հաճար, ինչպէս ցորենոյ

արան, նա կարող է կցել զայն այս երկրի հետ, եթէ բնականապէս կաւուտ լինի։ Բայց այն հողն զանազանի սորանից, փոքր ինչ նուազ բուսաբերութեամբ, և բուսաբեր հաւասար հարստութեան դրութեան մէջ, իւր բաղադրութեամբն, որ մի բնաւորութիւնն առաւել աւազոտ առնէ։ Աւազակի հողն է ցուրտ, մածանող, և թեթև, և փոքր ինչ սոքա խիտ գարւոյ հողոյ հետ համեմատելով, զոր անուանեն աղքատ, միջին և հարուստ, քանզի ինն ամեայ ժամանակին պտղաբերէ մի, երկու, կամ երեք հունձ վարսակի, մի անգամ եւեթ վարուած կամ աղբ ընկալած լինելով։ Հաճարի երկիրն է աւազուտ, որոյ վերայ բաց ի հաճարէն ոչ ինչ հունտ յարմար է սերմանել, և միմիայն հունձ տայ, ամէն երեք, վեց, ինն, և տասն և երկու ամաց մէջ ըստ չափու իւր վերայ գործադրած աղբոց։

## Հանքախօսական և երկրախօսական տեսութեան խնդրոյ տակ եղած երկիրները։

Պէտք է զանազանել զերկիրն, քանզի կայ հանքային կամ անգործարանաւոր և գործարանաւոր մասն. առաջին մասն յատկապէս բաղադրուած է առաւելապէս պաղլեղից, կաւճից, կրից, և մագնիսական հողից, որոց հետ նաև են թթու աղք, միացած են և կազմեն հանքարանական և երկրախօսական տեսակս. այս առաջին մասն՝ որոյ վերայ խօսեցանք, կազմակերպուած բնալուծական, հրային, օդային և ջրային ազդեցութեամբ։ Որով որոշած և լուծած են նախկինք, և յետոյ նոցա հետ խառնած են հազարաւոր տեսակ բեկորս։

Երկրորդ տեսակն, որ է բուսահող կամ բուսաբեր, շարունակաբար կազմի տնկոց և անասնոց բաղադրութեան լուծմամբն, առանց որոյ ապառաժք պէտք է տիրաբար մերժէին մշակութիւնն, յորմէ հետէ իմանան թէ կարևոր է ճանաչել հողոյն խաւի թանձրութիւնն, որք ձևացուցանէ աւերակաց շեղջս. քանզի որչափ այս թանձրութիւնն շատ է, այնչափ ևս առաւել օգնէ արմատների զարգացմանն, և տնկոց հաստատութեանն, ջրոյ՝ կազի և ջերմանիւթոյ ազդեցութեանն և կանոնաւորութեանն, և դիւրացուցանէ մշակագործական գործեաց ազդեցութիւնըն. հազիւ թէ կարողացան յայտնել, թէ այս արդեանց վերայ պէտք է առաւելուլ աճման հարստութեան, ինչպէս տեսնուած է, ոչ միայն հանքային աւերակաց հողոյ խաւի թանձրութիւն, այլ և այս հողոյ խաւի մասն, որ խառնուած է բուսաբեր հողոյ հետ, որք և կազմեն զմշակեալ հողս, մի 16 etuc խորութեան միջին այն է, որ պէտք է ունել՝ շոգիի ներքոյ չանկանելոյ առթիւ, զոր խորութեան բնութիւնն յայտնած է։ Խորութեան ծանօթութիւնն որքան որ կից է ստորին հողոյ հետ, այնքան ևս կարի հարկաւոր, քանզի սաստիկ ազդեցութիւն ունի երկրի վերագոյն ծալի կամ խաւի վերայ, ո՛չ միայն նուազ կամ առաւել մերձաւորութեամբ մակերևութին, այլ և իւր զանազանութեամբն և իւր բաղադրութեան համեմատութեամբն, իւր նուազ կամ առաւել պնդութեամբն, իւր թափանձականութեամբն, կամ անթափանձականութեամբն, իւր հորիզոնական դրութեամբն, իւր ստորնութեամբն, իւր յա-

տուկ մակերեւոյթի հաւասարութեամբն կամ անհաւասարութեամբն, իւր կարգի ընդհատութեամբն և պատառմամբն, զորս կարէ ներկայացուցանել ։

Գնահատութիւն երկրի։—Այս գնահատութիւնն երկրի բնական զօրութեան, բնալուծութեան և անկոյն համեմատ, զոր երկիրն ինքնին բուսուցանէ։ Տեսանելեաց և շօշափելեաց ճանաչումն, երեսաց գոյնն, և շօշափմամբ մատանց վերայ կրթեալ ճնշումն կարեն մի խիստ և մեծանող երկիրն որոշել մի որոշ երկրէց, և տալ երկաթի ժանգի ներկայութեան կամ բացակայութեանն նշանակն և կաւճի և կրախառն երկրի յայտնութիւնն։

Երբ կամենաս ամենաճիշտ իմանալ բնական զօրութիւնս, պէտք է դիմել մանրազնին և փորձոյ օգնականութեան, և տեղական ինքնաբոյս բուսոց տեսակաց բացայայտութեամբն և նոցա աճման կերպարանօքն երկրի բնութեան վերայ ունել մի քանի գաղափար. սակայն հետազօտութեան ամենապահով առաջնորդն է բնալուծական լուծումն. բայց եթէ ոք կամի պարզ փորձականութենէն առաւել ինչ քաղել, եթէ ոք կամի առաւել ինչ կատարել՝ քան թէ հաստատել բուսաբեր հողոյ, կրի, պաղլեղի և կաւճի մերձաւորութիւնն, այն կաւճի, որ ոչ պահանջէ, եթէ ոչ առաջադրութիւն առ հուրն՝ և բուսաբեր հողոյն բացայայտութիւն, պահանջէ կիրարկութիւն chlorhydrique թթուութեան, կրի բացայայտութեան համար, պահանջէ շրջումն ի փոշի, և թափել աման յամանոյ, որպէս զի խիճն և պաղլեղն բաժանին աւազից և կաւից. եթէ ոք կամի լուծեալ հողոյ կամ նորա մէջ պատահաբար հանդիպած իրաց թիւն և ծանրութիւնն ճշտութեամբ գիտել, ոչ կարէ մերժել մին այսպիսի արարից խառնուրդն, որովհետև և ոչ կարեն լուծանել կամ գնահատել գոյութեանց հնգետասանն կամ աւելին, քանզի մինչ ցարդ եղած եղանակներէն (melhode) ամենէն կատարեալն է Գ. Գալէի եղանակն։

(Շարունակելի)

Թ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՄԵԱՆ.

---

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ

ՊԱՐՈՆ ՐԱՖՖԻԻ ՙՙՓՈՒՆՋ,, ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ։

---

Մերձ երեսուն տարի է, յորմէ հետէ մեր գրաբառի և աշխարհաբառի մէջը սաստիկ պատերազմ է ծագած և անժխտելի է որ, վերջինս յաղթող կը հանդիսանայ, ձգելով իւր հիմը գրաբառի աւերակների վերայ*)։ Հետևաբար աշխարհաբառն էլ առ այժմ ունի իւր մէջն ամենամեծ հերձուածներ ու երկպառակութիւններ, ըստ որում իւրաքանչիւր գաւառի կամ երկրի ծնունդը նախադասելով իւր բարբառը, գուն է գործում իւր ոճն, բառերի հոլովումները, բայերի խոնարհումներն ընդունել տալ միւսներին։ Տաճկաստանի Հայերն էս մասին աւելի

(*) Ընդհակառակն՝ գրաբարին ընդհանրանալն։ Վասն զի ամեն տեղ աշխարհաբարն կմերձենայ գրաբարին. ասել է թէ գրաբարն վերակենդանանալով պիտի ընդհանրանայ։

Ն. Խ։